

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/4

18 հունիսի 2013 թ.

Քննարկվեց քաղաքացի Արսեն Վանեսյանի 17.05.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 1411112 վարչական ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 1411112 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

Ֆիզիկական անձ Արսեն Վանեսյանը պարբերաբար՝ 2010, 2011, 2012 թվականներին, առանց համապատասխան պետական գրանցման իրականացրել է վառելափայտի վաճառքի ապօրինի գործունեություն: Վառելափայտը ձեռք է բերել Լավարի անտառատնտեսությունից: 2010 թ-ի հոկտեմբեր ամսին գնել է 560.000 դրամի վառելափայտ, 2011 թ-ի օգոստոս և դեկտեմբեր ամիսներին՝ 898.000 դրամի, 2012 թ-ի ապրիլ, մայիս և հունիս ամիսներին՝ 3.600.000 դրամի վառելափայտ: Ձեռք բերված վառելափայտի ընդհանուր գումարը կազմել է 5.058.000 դրամ: Վառելափայտը Ա.Վանեսյանի կողմից Ձիլ 130 մակնիշի Օ3 ՍԼ 652 պետհամարանիշի ավտոմեքենայով տեղափոխվել է Շիրակի մարզ և իրացվել է: Նշված գործունեությունն Արսեն Վանեսյանն իրականացրել է մենակ:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվել է Արսեն Վանեսյանի իրացման շրջանառությունը, որը կազմել է 6.322.500 դրամ: Խախտվել է <Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները: Արդյունքում վարչական ակտով կիրառվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանքները և գանձման է առաջադրվել ընդամենը 3.793.500 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 17.12.2012 թ-ի թիվ Ն-6023/14 գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել ք. Վանաձոր, Ներսիսյան 14 շենքի, բն. 44 հասցեի բնակիչ Արսեն Վանեսյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ: Գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հաշվարկել քաղաքացի Արսեն Վանեսյանի կողմից իրականացված ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը պատճառված վնասի չափը, որի հետևանքով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20-րդ բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է պետությանը պատճառված վնասի հաշվարկ: Մինևույն ժամանակ, քաղաքացի Արսեն Վանեսյանի կողմից իրականացված ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը պատճառված վնասի վերջնական չափը որոշելու նպատակով, հետաքննիչի որոշմամբ նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ <Փորձաքննությունների ազգային բյուրո> ՊՈԱԿ-ին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի համաձայն. <Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնում նյութեր են նախապատրաստվում քաղաքացի Արսեն Վանեսյանի նկատմամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Արսեն Վանեսյանի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ղ ո շ ու մ է՝

Քաղաքացի Արսեն Վանեսյանի 17.05.2013 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ